ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ
ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼ
ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ-2017
9-րդ դասարան
Տևողությունը 150 րոպե

Ա. Աշխատանք բնագրով:

Արտեմիդայի արձանը կառուցելիս հիմնականում օգտագործել են սպիտակ մարմար, որը կարծես միաձուլվում է ծովի, կանաչի և երկնքի լազուրի հետ: Ձեղունը պատված էր մարմարիոնե սալիկներով: Սյուների մույթերը նախշազարդ էին: Տաճարի կենտրոնում գտնվում էր Արտեմիդայի արձանը: Դիցուհու չքնաղ դեմքը, սլացիկ ձեռքերը, ոտքերը քանդակված էին լիբանանյան մայրի փայտից: Հանդերձը զարդարված էր երփներանգ քարերով՝ հակինթ, սադափ, շափյուղա:

Աշխարհի բոլոր ծագերից մարդիկ գալիս էին Եփեսոս՝տեսնելու Արտեմիդայի վեհասքանչ տաճարը, բայց ,ավա՜ղ, նրա փառքը հելլենական աշխարհում հավերժ չփայլեց. այն կանգուն մնաց ընդամենը չորս հարյուր տարի: Ք.ա. 356-թ. հուլիսի 21-ին այրվեց այդ վեհասքանչ տաճարը: Եփեսոսի բնակիչները կեսգիշերին սարսափահար ու սահմռկած տեսան՝ ինչպես կրակի բոցերը ծառս էին լինում դեպի վեր, հեղձուցիչ ծուխը խուժում էր ամենուր: Հավաքված խուժանը հասկացավ՝ մի աններելի ոճիր է կատարվել. հրդեհվել է Արտեմիդայի վահաշուք տաճարը: Եփեսոսցիների բոլոր ճիգերը ի դերև ելան: Տաճարը դարձավ հրո ճարակ:

1.Գրե՛ք՝ ինչ գիտեք Արտեմիդայի արձանի մասին: **(3 միավոր)**
2.Գրե՛ք **ձեղուն, մույթ , սահմռկել, ոճիր**, **լազուր** բառերի հոմանիշները:
(2 միավոր)
3.Գրե՛ք **ծագ, հակինթ, ճարակ, կանգուն, մայրի** բառերի համանունական շարքերը և բացատրե՛ք իմաստները: **(2 միավոր)**
4.Նշե՛ք՝ որտեղից է առաջացել **խուժան** բառը և բացատրե՛ք իմաստը: (2 միավոր)
5.Գրե՛ք՝ որ պետության հին անվանումից է կազմված **հելլենական** բառը: Այդ բառի արմատով գրե՛ք առնվազն երեք բառ: **(2 միավոր)**
6. Տեքստից դո՛ւրս գրեք այն բառերը, որոնցում գրաբարյան հոգնակերտ մասնիկը վերածվել է ածանցի: **(1.5 միավոր)**
7. Գրե՛ք **ծառս լինել** դարձվածքի իմաստը և նշե՛ք՝ տեքստում ինչ իմաստով է այն գործածված: **(1.5 միավոր)**
8.Տեքստից դո՛ւրս գրեք այն նախադասությունը, որի մեջ բութը դրված է շաղկապի զեղչման տեղում: **(1 միավոր)**

Բ. Շարադրություն՝ «Անմնացորդ նվիրվածություն » վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)